Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՇՎԵՅՑԱՐԻԱ

Հունիսի 6-ին, Շվեյցարիայի Բողոքական եկեղեցիների միջոգնության կազմակերպության (EPER և HEKS) հրավերով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Շվեյցարիա՝ իր օրհնությունը տալու և մասնակցելու հիշյալ կազմակերպության 50-ամյակի առիթով Ժնևում, Լոզանում և Յուրիխում կազմակերպված ձեռնարկումներին:

EPER-ը և նրան նախորդող Շվեյցարիայի Հայասերների Միությունը, սկսյալ 19-րդ դարի վերջից և 1915 թ. հայկական ցեղասպանությունից մինչև մեր օրերը, որպես քրիստոնեական սիրո և եղբայրության արտահայտություն, բազմիցս օժանդակել է հայ ժողովրդին թե՛ Հայաստանում, թե՛ Լիբանանում, թե՛ Սիրիայում, թե՛ Ֆրանսիայում և թե՛ Շվեյցարիայում:

«Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոլատյանը, Կրոնի գործոց խորհրդի նախագահ Լազար Սուջյանը, բարձրաստիճան հոգևորականներ: Նորին Սրբությանը ուղեկցում էին Արմավիրի թեմի առաջնորդ Սսողիկ եպս. Արիստակեսյանը և գավազանակիր Արտակ աբդ. Տիգրանյանը:

Փարիզի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիթեչյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական նվիրակ Գյուտ արքեպս. Նագգաշյանը, հայ համայնքի ներկայացուցիչներ: Նույն օրը Վեհափառ Հայրապետը իր ընկերակիցների հետ Փարիզից մեկնեց Ժնև:

ԺԱՄԱՆՈՒՄ ԺՆԵՎ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ EPER-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Ժնևում Գարեգին Ա Կաթողիկոսին դիմավորեցին Շվեյցարիայի Բողոքական եկեղեցիների միջոգնության կազմակերպության ներկայացուցիչները, Շվեյցարիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Կարեն Նազարյանը, Առաջնորդ Վիգեն եպս. Այքազյանը, Շվեյցարիայի եկեղեցական խորհրդի և ընդունելության հանձնախմբի անդամները և հայ համայնքի այլ ներկայացուցիչներ ու անդամներ:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը հանդիպեց EPER-ի ներկայացուցիչներին հյուրանոցի սրահում:

Հաջորդ օրվա ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպեց մամուլի և ձայնասփյուռի թղթակիցների հետ, ելույթ ունեցավ հեռուստա-

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԺՆԵՎՈՒՄ

տեսությամբ: Նորին Սրբությունը լրագրողներին ներկայացրեց իր առաքելության նպատակը, խոսեց Հայ Եկեղեցու, Հայաստանի և հայ ժողովրդի ներկա կացության մասին:

Հունիսի 7-ին, օրվա երկրորդ կեսին, EPER կենտրոնատեղիում կազմակերպության ղեկավարների հետ կայացած հանդիպման ընթաց-

ՀԱՆԴԻՊՈՒՄ EPER ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

քում քննարկվեցին հայ և շվեյցարական միջեկեղեցական ներկա և ապագա հարաբերություններին առնչվող հարցեր:

Երեկոյան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Շվեյցարիայի Բողոքական եկեղեցիների միջոգնության կազմակերպության կողմից տրվեց պաշտոնական հյուրասիրություն, որի ընթացքում շարունակվեցին միջեկեղեցական հարաբերությունների շուրջ խոսակցությունները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Շաբաթ օրը, հունիսի 8-ին, Նորին Սրբությունը այցելեց Շվեյցարիայի միջազգային ռադիոյի (Radio Suiss International) և հեռուստատեսության կենտրոնը և զրույց ունեցավ կրոնական հաղորդումների բաժնի վարիչի հետ, պատասխանեց նաև լուրերի բաժնի վարիչի հարցերին, որը ուղիղ եթեր էր հեռարձակվում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ, ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը հյուրը եղավ Շվեյցարիայի հայ համայնքի և «Հրաշափառի» ուղեկցությամբ թափորով առաջնորդվեց դեպի Ս. Հակոբ եկեղեցի: Հետզոհաբանական աղոթքի և բարիգալստյան արարողության Սմենայն Հայոց Կաթողիկոսն իր

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

անդրանիկ խոսքն ուղղեց ներկաներին:

Սրարողություններից հետո Վեհափառ Հայրապետը շրջեց Հայ կենտրոնի բաժինները և այնտեղ կատարված կրթական գործունեության մասին իր խորին գոհունակության խոսքն ասաց: Նորին Սրբությունը այցելեց նաև Հայաստանի Հանրապետության դեսպանատուն՝ տալով իր հայրապետական օրհնությունը հաստատությանը:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կիրակի, Հունիսի 9-ին, Նորին Սրբությունը Ս. Հակոբ եկեղեցում

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ Ս.ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

մատուցեց իր անդրանիկ հայրապետական պատարագը: Նրան սպասարկեցին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Գյուտ Արքեպս. Նագգաշյանը և Շվեյցարիայի հայոց թեմի Առաջնորդ Տ. Վիգեն եպս. Այքակյանը: Պատարագի սրբական արարողությանը ներկա էին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, Եվրոպայի եկեղեցիների համագումարի, Շվեյցարիայի Բողոքական եկեղեցիների միջոգնության կազմակերպության, ինչպես նաև Պոլսո Տիեզերական Պատրիարքության և Ուղղափառ Եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչներ:

Ս. Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը հայերեն և ֆրանսերեն լեզուներով քարոզ խոսեց: Օգտվելով այն բարեպատեհ առիթից, որ այդ օրը Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնադրության տոնն էր, Նորին Սրբությունը խոսեց Ս. Էջմիածնի առաքելության նոր շրջանի մասին:

Կեսօրին Ռիչմոնդ պանդոկում, ի պատիվ Նորին Սրբության, տրվեց պաշտոնական ճաշկերույթ: Ճաշկերույթին, բացի եկեղեցական և միջեկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչներից, ներկա էին Ժնևի և Տրուանեի քաղաքապետները, պաշտոնատար այլ անձինք:

Վեհափառ Հայրապետը իր հայրապետական պատգամը ուղղեց ներկաներին՝ միասնական ջանքերով իրենց մասնակցությունը բերել հայ համայնքի վարգացմանը և աջակից դառնալ Հայրենիքին ու Մայր Աթոռին:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը հանդիպեց շվեյցարահայ երիտասարդների հետ, իր հայրապետական օրհնությունն ու հորդորները տվեց նրանց, պատասխանեց երիտասարդներին հետաքրքրող հարցերին:

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հունիսի 10-ի առավոտյան Գարեգին Ա Սմենայն Հայոց Կա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

թողիկոսը, ընկերակցությամբ Գյուտ արքեպս. Նազգաջյանի, Վիգեն եպս. Այքայյանի, Ասողիկ եպս. Արիստակեսյանի և գավազանակիր Արտակ աբդ. Տիգրանյանի, ժնևում այցելեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոն: Մուտքի մոտ Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ԵՀԽ-ի ընդհանուր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայկերը, Եվրոպական Եկեղեցիների Համագումարի ընդհանուր քարտուղար դոկտ. Ժան Ֆիշերը, երկու միջեկեղեցական կազմակերպությունների ավագ պաշտոնյաներ:

Սպա թափորն ուղղվեց դեպի ԵՀԽ կենտրոնի մատուռ, որտեղ կատարվեց Արնագալի ժամերգություն: Ժամերգության ընթացքում Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը քարոզ խոսեց, որում անդրադարձավ 51 թ. առաքյալների անդրանիկ ժողովին, որը նկարագրվել է Գործք Առաքելոց գրքում, և որն առհասարակ առաջինն

է համարվում քրիստոնեության պատմության մեջ և միասնականության գեղեցիկ օրինակ է հանդիսանում:

Բարեխոսական աղոթքից հետո ԵՀԽ և ԵԵՀ ղեկավարները Վեհափառ Հայրապետին և նրա ընկերակիցներին առաջնորդեցին հանդիսասրահ: Այստեղ Գարեգին Ա Կաթողիկոսին իրենց ողջույնի խոսքն ուղղեցին ԵՀԽ ընդհանուր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայկերը, ԵԵՀ ընդհանուր քարտուղար դոկտ. Ժան Ֆիշերը, ապա Շվեյցարիայի Բողոքական Եկեղեցիների միջոգնության բաժանմունքի վարիչ-տնօրեն Ռուդոլֆ Ռենֆերը: Նրանք բարձր գնահատեցին Վեհափառ Հայրապետի բազմամյա ծառայությունը ԵՀԽ-ում և նշեցին, որ սույն այցելությունը մի նոր առիթ կհանդիսանա առավել ևս սերտացնելու կապը Ամենայն Հայոց Կաթողիկոսության և ԵՀԽ-ի, ԵԵՀ-ի ՇԲԵ-ի միջև:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻՈՒՄ

Ողջույնի խոսքերից հետո ներկաներին իր պատգամը տվեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Իր խոսքում Նորին Սրբությունը հատուկ ընդգծեց աշխարհում էկումենական շարժման կարևորությունը, որի խթանիչ ուժ է հանդիսանում անդամ Եկեղեցիների միասնական գործունեությունը՝ որպես հոգևոր արժեքների և բարոյական առողջ սկզբունքների պահպանման գրավական:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԽՈՍՔԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ՝ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Այս պահը չափազանց հատկանշական է իմ կյանքում: Ես հաճախ եմ կանգնել այս բեմի վրա և բազմաթիվ անգամներ նստել այս դահլիճում հանդիսավոր առիթներով կամ Կենտրոնական Կոմիտեի հերթական նիստերին ու

Էկումենիկ հավաքներին: Այսօր ձեր առջև կանգնելն այլ բնույթ ունի, այլ իմաստ, և ուրիշ մի բավականություն է պատճառում:

Ես գալիս եմ ձեզ մոտ մեկ այլ երկրից, մեկ այլ պատասխանատվությամբ, ինձ հետ բերելով մեկ այլ փորձառություն և ձեզ հետ կիսելով տարբեր մտահոգություններ, ինչպես նաև տարբեր տեսիլքներ՝ նոր և ամենահրամայական հեռանկարներով:

Ես գալիս եմ ձեզ մոտ Հայաստանից, որը համաշխարհային պատմության մեջ Աստվածաշնչական ժամանակներից ի վեր հայտնի է որպես Արարատ լեռան երկիր, ներկված հաճախ արյան գույնով, որը հավասարապես մահվան և կյանքի, կործանման և վերաշինության, եղեռնի և հարության խորհրդանիշ է, որոնք այնպես են միմյանց միահյուսված, ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոսի կյանքում:

Ես գալիս եմ ձեզ մոտ Սուրբ Էջմիածնից՝ հայ քրիստոնեության հոգևոր սրբարանից, հայ ժողովրդի որպես քրիստոնյա ազգ մկրտվելու ավազանից, ուր 301 թվականին քրիստոնեական հավատքը պաշտոնապես ճանաչվեց որպես Ազգության և Պետության կրոն:

Ես գալիս եմ ձեզ մոտ մի վերանորոգված երկրից՝ նոր անկախ պետականությամբ, որին այնքան երկար դարեր տենչում էր աշխարհասփյուռ հայ ժողովուրդը: Ես գալիս եմ ձեզ մոտ նոր հույսերի, ձգտումների և ծրագրերի երկրից:

Ես ձեզ եմ բերում միլիոնավոր հայերի սերն ու բարեկամությունը Հայաստանից և ողջ սփյուռքից:

Ես ձեզ եմ բերում շնորհակալություններն ու երախտագիտությունը բոլոր այն մարդկանց, որոնց համար դուք այնքան հաճախ աղոթեցիք այստեղ՝ այս Էկումենիկ կենտրոնում Լենինականի երկրաշարժից (7 դեկտեմբեր 1988), Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտությունից և պարտադրված շրջափակումից տուժածների ցավն ու տառապանքները թեթևացնելու համար:

Ես ձեզ եմ բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատրաստակամությունը ավելի ու ավելի ակտիվ կերպով գործելու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպական Եկեղեցիների Համաժողովի հետ կապված քրիստոնեական Եկեղեցիների համաշխարհային ընկերակցության մեջ և մասնակցելու բոլոր այն ջանքերին, որ դուք տանում եք այս Տան մեջ, այս Էկումենիկ Կենտրոնում՝ անդամ եկեղեցիների անունով:

***

Թանկագին եղբայրներ և քույրեր,

Դուք լավատեղյակ եք, որ Հայաստանը այն երկրներից մեկն է, որոնք կանգնած են արմատապես նոր իրավիճակի առջև՝ Խորհրդային Միության փլուզումից հետո: Գտնվելով Կովկասում, Փոքր Ասիայի արևելյան սահմանագլխին, մեր Եկեղեցին որպես սահմանապահ եկեղեցի գտնվում է առաքելության վերանորոգված իմաստի ու հրամայականի առջև՝ ազատության ու անկախության նոր պայմանների ներքո: Մեր առջև դրված հիմնահարցը հետևյալն է. ինչպե՞ս պատասխանել հոգևոր կյանքի վերարթնացող

փենտրտուքին՝ այն ներշնչելու և ղեկավարելու համար Քրիստոսի Ավետարանով, որն ավելի քան տասնյոթ դարեր կազմել է հայ ժողովրդի գոյության խարիսխը: Ինչպե՞ս վերակենդանացնել Հայ Եկեղեցու Ավանդությունը, որը ներծծվել ու պտղավորվել է Հիսուս Քրիստոսի հավատքով ու Իր Ավետարանի ուսմունքով և այժմ ժողովրդի ամենօրյա կյանքի հյուսվածքի մեջ վերակենդանացման ու ներթափանցման կարիքն ունի:

Ձեզ կամ Հայաստանից դուրս և ավանդաբար քրիստոնյա երկիր ճանաչված ուրիշ երկրներում ապրող որևէ այլ անձնավորության համար հեշտ չէ պատկերացնել այն վնասը, որ հասցրել է ամբողջատիրական վարչակարգի ճնշիչ տիրապետությունը, որի համար կրոնը համարվում էր մի թշնամի, որը ցանկացած ձևով և ցանկացած գնով պետք է վերացվեր: Ցոթ տասնամյակների աթեիստական քաղաքականությունը տսկ հավատքի սկզբունքների կամ այդ նպատակով որևէ կրոնական հավատքի մերժման գաղափարաբանական փորձ չէր, այլ ավելի շուտ մի քաղաքականություն, որի նպատակն էր համայնքային կյանքի եկեղեցական կառույցի ողջ ցանցի քայքայումը, որը, ինչպես դուք լավ գիտեք, քրիստոնեական հավատքի հենց էությունն է կազմում:

Այս նոր շրջադարձը մեր Հայ Եկեղեցու վերջին շրջանի պատմության մեջ երջանկության, շնորհակալության և առ Աստված գոհության մի պահ է և միևնույն ժամանակ ավելի մեծ ընդգրկման ու ավելի ծանր պատասխանատվության հրավեր և մղիչ ուժ: Ես կկամենայի մեր Հայ Եկեղեցու և՛ երջանկությանը, և՛ մարտահրավերին բաժնեկից տեսնել մեր բոլոր քրիստոնյա եղբայրներին ու քույրերին՝ առանց դավանական կամ հարանվանական զանազանության: Այն, ինչ պատահում է մեկ անդամին, պատահում է Քրիստոսի ամբողջական մարմնին: Նման ըմբռնման ու մոտեցման մեջ եմ ես տեսնում էկումենիզմի ամենաճշմարիտ և ամենախոր իմաստը:

Երբ ես, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, թեև շատ կարճ, բայց իմ առաջին այցելությունն եմ տալիս ԵՀԽ-ին և ԵԵՀ-ին, ուզում եմ ձեզ՝ քրիստոնեական բարեկամության, միասնականության ու միության քաջալերման ազնիվ նպատակի սպասավորների հետ կիսել իմ մի քանի մտածումներն ու զգացումները՝ կապված անցյալի փորձառության և ապագայի սպասումների հետ:

Սա մի պահ է, երբ ես հոգևորապես պարտավորված եմ զգում ձեր առջև վկայելու իմ անձնական պարտքի զգացումը էկումենիկ շարժման և մասնավորապես ԵՀԽ-ի հանդեպ: Այսօր ես այստեղ կանգնած եմ որպես Հայ Եկեղեցու առաջին սպասավոր: Սակայն ես այստեղ ինձ տանն էի զգում 36 տարի առաջ, երբ «այստեղը» «150 Route de Ferney» չէր, այլ «Route de Malagnou» Լեմանի մյուս ափին, երբ ես, որպես իմ Եկեղեցու ամենաճոխին սպասավորներից մեկը, որպես մի պարզ քահանա և ուսանող, անմոռանալի հանդիպում ունեցա երջանկահիշատակ Դր. Վիսսեր դ'Հուֆթի հետ, որին ես միշտ համարում եմ իմ էկումենիկ գործունեության հոգևոր հայրն ու դաստիարակը: Այս հանդիսավոր առիթով ես ուզում եմ հարգանք ընծայել իր հավիտենական հիշատակին, ինչպես նաև ԵՀԽ-ի ստեղծման ու պայծառացման մյուս ջահակիրների հիշատակին, ինչպիսիք էին Նորման Գուդալը, Ֆրանկլին Ֆրայը,

Էռնեստ Փայնը, Ցուջեն Բլեյքը, հ. Գեորգի Ֆլորովսկին և պրոֆ. Ալիվիսատոսը՝ առաջամարտիկներ, որոնք խորապես ազդել են իմ վրա՝ իմ էկումենիկ ուխտագնացության մեջ՝ Եկեղեցու միության, մեր բոլորի Տեր Հիսուս Քրիստոսի կամքի կատարման ճանապարհին:

ԵՀԽ-ն ԵԵՀ-ի հետ ստեղծման ժամանակից ի վեր մեծ տեսիլքի և օրինակելի նախաձեռնության երկար ճանապարհ է կտրել: Աշխարհն իր բոլոր գիտական ու տեխնոլոգիական առաջխաղացումներով հսկայական մեծության տեղաշարժեր է ունեցել: Մեր Եկեղեցիները կանգնեցին կյանքի հարաճուն աշխարհայնական հակման նոր մարտահրավերների առջև, որոնք ախտահարեցին և շարունակում են ախտահարել մեր կյանքը մշակութային, ընկերային, բարոյական, տնտեսական և քաղաքական բոլոր ոլորտներում և բնագավառներում: Մեր էկումենիկ բառարանում նոր տերմինաբանություններ կերտվեցին, երբեմն փոխառնվելով ներսից և երբեմն ստեղծվելով դրսում: Այսօրվա աշխարհը հեռու է նույնը լինելուց, ինչ էր հիսուն տարիներ առաջ, ԵՀԽ-ի ստեղծման առաջին օրերին:

Սակայն մեր գործունեությունը մնում է նույնը, քանզի այն ճառագայթում է մեր տիրոջ պատվիրանից և հանձնարարությունից. «Որպեսզի նրանք բոլորը մեկ լինեն: Ինչպես Դու, Հայր, իմ մեջ ես, և ես՝ Քո մեջ, թող նրանք նույնպես լինեն մեր մեջ» (Հովհ. ԺԷ, 20-21): Այդ գործունեությունը չունի ո՛չ երեկ, ո՛չ այսօր, ո՛չ վաղը, ո՛չ էլ այստեղ կամ այնտեղ: Այն հավիտենապես և տիեզերականորեն վավերական է ու անհրաժեշտ բոլոր ժամանակների ու բոլոր տեղերի համար:

Ճիշտ է, որ մենք չենք կարող անտեսել աշխարհի կարգը: Աշխարհն Աստուծո աշխարհն է, ուստի և մերն է Իր մեջ, Իրենով և Իր համար: Սակայն մենք ունենք մեր սեփական չվերջացած ու չվերջացող պարտքը՝ մեզ մեր Տիրոջ կողմից և Իր Ավետարանի ու Իր Եկեղեցու Ավանդության միջոցով ավանդված: Աշխարհի մեջ մեր ներգրավման զանազանությունը հոմանիշ չէ աշխարհի հանդեպ խլության կամ անտարբերության հետ: Կա՛մ մենք պետք է մնանք «աղ» և «թթխմոր», կա՛մ մենք կորցնելու ենք մեր ինքնությունը, մեր ըմբռնումները և մեր քրիստոսատուր մանդատը:

Անշուշտ իմ այս դիմումի մեջ ես չեմ կարող մանրամասն ներկայացնել մեր Հայ Եկեղեցու այսօրվա դժվարին կացությունը: Սակայն ես հավատում եմ, որ շատ ուրիշ եկեղեցիներ նույնպես տարբեր ձևերով ու տարբեր աստիճաններով դիմագրավում են նույն և նման մարտահրավերների: Ես հավատում եմ, որ աշխարհի մարտահրավերը մեր բոլոր եկեղեցիներին ու նրանց սպասավորներին, ԵՀԽ-ին ու ԵԵՀ-ին, կոչում է հստակ ու զորավոր կերպով հաստատելու իրենց սեփական քրիստոնեական ինքնությունը և համադաշնաբար կատարելու այդ վկայությունը հանուն Եկեղեցու միության, որպես «թթխմոր» մարդկության միության:

Եզրափակելով, ես ուզում եմ ձեզ՝ ԵՀԽ-ի և ԵԵՀ-ի կենտրոնակայանի անդամներին, հայտնել իմ շնորհակալությունը և խորին գնահատանքը ձեր աշխատանքի համար այստեղ՝ Էկումենիկ Կենտրոնում, և արտահայտել իմ անկեղծ իղձն ու ցանկությունը, որ անդամ Եկեղեցիներն ու Համաշխարհային Խորհուրդը այնպիսի սերտ կապեր ունենան, որ մենք միասնաբար կարողանանք

ավելի հստակորեն տեսնել մեր օրակարգի առաջնահերթությունները ու յուրահատկությունները՝ պայմանավորված Ավետարանով և մեր ժողովուրդների կյանքի առանձնահատկություններով: Քանզի դուք մի կազմակերպության ծառայողներ չեք, այլ մեր Եկեղեցիների սպասավորներ:

Ես գիտեմ, ես զգում եմ, որ մեր առջև դրված առաջադրանքը հսկայական է և բարդ: Սա մի պատճառ է աշխուժացնելու միության մեր ջանքերը, որովհետև մենք չենք կարող իրականացնել մեր առաքելությունը առանց նման ընկերակցության և առանց մեր հաստատուն աճ արձանագրող ընթացքի դեպի միություն, ինչպես որ մեր Տերը հիշեցնում է մեզ, որ այդ միությունը բացարձակ անհրաժեշտություն է մեր վստահելիության համար, ինչպես Նա ասաց Իր վերը հիշված խոսքերին ավելացնելով. «որպեսզի աշխարհը հավատա, որ Դու ուղարկեցիր ինձ»:

Ես իմ այս աղքատիկ խոսքն ավարտում եմ Առաքյալի հորդորի զորավոր ու սրտերը ջերմացնող բառերով. «Եւ թող միխիթարութեամբ յոյսը ընդունենք» (Հռոմ. ԺԵ, 5):

Ուրեմն, եղբարնե՛ր իմ սիրելի, հաստատո՛ւն մնացեք, անշա՛րժ եղեք, ամեն ժամ ավելի՛ն եղեք Տիրոջ գործի մեջ. իմացե՛ք, որ ձեր վաստակը իզուր չէ Տիրոջ առաջ (Ա Կորնթ. ԺԵ 58):

Օրվա ընթացքում Վեհափառ Հայրապետը ունեցավ երեք կարևոր հանդիպումներ՝ Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների, ԵԵՀ-ի ընդհանուր քարտուղար Ժան Ֆիշերի և ԵԵՀ-ի աշխատակիցների, ԵՀԽ-ի ընդհանուր քարտուղար Կոնրադ Ռայկերի հետ:

Հանդիպումներից հետո, ի պատիվ Գարեգին Ա Կաթողիկոսի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ EPER-Ի ԵՎ ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրվա երկրորդ կեսին Վեհափառ Հայրապետը այցելեց Ժնևի հռչակավոր Ս. Պետրոս տաճար, հանդիպեց Ժնևի Բողոքական Եկեղեցու յոթ գլխավոր պատասխանատուների հետ, որի ընթացքում խոսվեցին հայ և միջեկեղեցական հարցերի շուրջ:

Երեկոյան ժամը 17.30-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Ժնևի Շան-բեկի արվարձան, Հունաց Տիեզերական Պատրիարքի ենթակայության կենտրոն, ուր Նորին Սրբությանը դիմավորեց կենտրոնի ընդհանուր պատասխանատու Դամասկինոս Միտրոպոլիտը: Խորանի առջև Տ. Դամասկինոս Միտրոպոլիտը իր սրտի խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ բարձր գնահատելով նրա միջեկեղեցական գործունեությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺՆԵՎԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Գարեգին Ա Կաթողիկոսը իր խոսքում անդրադարձավ Ռուսաց, Վրաց, Ռումինիայի, ինչպես նաև Կ. Պոլսո Տիեզերական Պատրիարքներին տված իր այցելություններին, հիշեց նաև Ռուսաց Պատրիարքի այցելությունը Ս. Էջմիածին և Հայաստան, խոսեց միջեկեղեցական հարաբերությունների մասին, մասնավորաբար ոչ քաղկեդոնական Եկեղեցիների (Հայ, Ղպտի, Ասորի, Հաբեշ, Հնդիկ) և բյուզանդական հունադավան քաղկեդոնական Եկեղեցիների ընտանիքի միջև և հույս հայտնեց, որ ապագայում դրանք ավելի կամրանան:

Արարողության ավարտին տեղի ունեցավ հյուրասիրություն և հուշանվերների փոխանակություն:

Հունիսի 10-ը, Վեհափառ Հայրապետի խոսքերով ասված, ճանաչվեց որպես «Էկումենական օր»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Վեհափառ Հայրապետի հաջորդ այցելությունը եղավ Միջազգային Կարմիր Խաչի կազմակերպություն: Վեհափառ Հայրապետին ընկերակցուս էին Գյուտ արքեպս. Նազգաշյանը, Շվեյցարիայում Հայաստանի դեսպան Կարեն Նապարյանը, EPER-ի ներկայացուցիչ Բոնգայդները և ԵՀԽ-ից Ալեքսանդր Բելոպոպսկին:

Խորին հարգանքով Վեհափառ Հայրապետին ընդունեցին Միջազգային Կարմիր Խաչի նախագահ Սոմարուգան և իր օգնականը՝ Ժան Մարկ Բոռնները: Խոսակցության նյութ դարձավ բանտարկյալների կացությունը, ռազմական բախումների ընթացքում անհայտ կորածների որոնումը և ականապատված շրջանների ողբերգությունը:

ԺՆԵՎԻ ՅՈՒՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻՈՒՄ ՅԱՆԴԻՊՈՒՄ ՊԱՄԱՍԿԻՆՈՍ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻ ՀԵՏ

Նախագահ Սոմարուգան Վեհափառին տեղյակ պահեց այն աշխատանքների մասին, որոնք կատարվում են Կովկասում, Հայաստանում և Միջին Արևելքում:

Վեհափառն էլ մանրամասնաբար Նորին Վսեմությանը ներկայացրեց Հայաստանում և Արցախում տիրող իրավիճակը, իր գնահատանքը հայտնեց Միջազգային Կարմիր Խաչի ծառայությունների համար և հանգամանորեն խոսեց Հայաստանյայց Եկեղեցու կատարած ու կատարելիք դերի մասին, այնուհետև Կարմիր Խաչի նախագահին հրավիրեց անձամբ այցելել Հայաստան:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՑՅՈՒՐԻԽՈՒՄ

Հունիսի 12: Վեհափառ Հայրապետը իր շքախմբի և EPER-*ի հետ*

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

HEKS-Ի ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻՈՒՄ

կապված Նորին Սրբության գործակից և խորհրդական Պրն. Պերճ Մարլյանի ուղեկցությամբ առավոտյան ժամը 8.00-ին Ժնևից շոգեկառքով մեկնեց Ցյուրիխ:

Ցյուրիխում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին HEKS-ի ընդհանուր քարտուղար Հայնց Կոհլերը, կապմակերպության այլ ներկայացուցիչներ:

Կապմակերպության կենտրոնատեղիում, HEKS-ի անդամների հետ միասին, Վեհափառ Հայրապետը տեսակցություն ունեցավ գերմանալեզու մասուլի ներկայացուցիչների հետ, պատասխանեց թղթակիցների հարցերին: Ասուլիսին մասնակցում էին նաև հայ համայնքի «Մենք» թերթի, որը նույնպես գերմանալեզու է, աշխատակիցները:

Կեսօրին HEKS-ի ղեկավարության կողմից, ի պատիվ Գարեգին Ա Կաթողիկոսի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում Վե-

ՀԵՔԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

հափառ Հայրապետի կողմից բացատրություններ տրվեցին Հայաստանի, Հայ Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մասին:

Ճաշկերույթից հետո գումարվեց հատուկ նիստ, որին մասնակցում էին «Շվեյցարիայի Ս. Գրոց ընկերության» նախագահ դոկտ. Վայթմանը և «Երկրորդ աշխարհ» կազմակերպության և թերթի պատասխանատու Տիկին Ս. Հիպլիթը: Այս կազմակերպությունները HEKS-ի հետ մեկտեղ Ս. Էջմիածնի տպարանի նվիրատուներից են:

Նիստի ընթացքում քննարկվեցին տպարանի միջոցների և արդիականացման խնդիրներին առնչվող հարցեր: Ապա Վեհափառ Հայրապետը ներկայացրեց քրիստոնեական դաստիարակության, Հոգևոր ճեմարանի հետագա գործունեության, եկեղեցիների վերականգնման և նորերի կառուցման հետ կապված մի ծրագիր: Կազմակերպության ներկայացուցիչները ուշադիր լսելով Նորին Սրբությանը, վստահեցրին, որ ծրագրի իրականացման գործին կբերեն իրենց մասնակցությունն ու աջակցությունը:

Երեկոյան հետաքրքիր հանդիպում էր սպասվում լուսանկարիչ Անդրեաս Վիֆթենբերգերի աշխատանքների ցուցասրահում, ուր արվեստագետը ներկայացրել էր Հայաստանին նվիրված լուսանկարների շարքը՝ հիմնականում պատմական-ճարտարապետական առավել մեծ արժեք ներկայացնող հուշարձանները: Ցուցահանդեսին ներկա էր նաև Ցյուրիխի քաղաքապետը, որը բարիգալստյան ջերմ խոսքեր ուղղեց Վեհափառ Հայրապետին: